ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍԻՐԱՐԴԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆԸ

«Հայ մանրանկարչության պայծառ գույների արտացոլումը կար նրա աչքերում»: Այսպես է բնութագրել Ս. Տեր-Ներսեսյանին լրագրողներից մեկը, երբ նրան հանդիպել է Մատենադարանում:

Եվ իսկապես, անգնահատելի է նրա նվիրումը հայ արվեստին: Մեծ գիտնականն իր խոր ու իմաստնացած հայացքով վերծանում էր մեր մագաղաթյա մատյանները: Մատենադարանի մասին նա այսպես է արտահայտվել. «Մատենադարանը ինձի համար սրբավայր մըն է, որ ինքնամոռաց խոկումի կը տրամադրէ: Հայաստան գտնուած օրերուս բոլոր ժամերը կուզեմ հոս անցկացնել: Այնքան բան կը պատմեն այս ձեռագրերը, այնքան գաղտնիքներ կը թաքցնեն իրենց մէջ: Երևանի Մատենադարանը,- շարունակում է նա,- անսպառ գանձարան մըն է, դեռևս այնքան բան կայ ուսումնասիրելու, աշխարհին ցոյց տալու: Եվ ուրախ եմ, շատ ուրախ, որ ան իր յարկին տակ ունի շնորհալի երիտասարդ գիտնականներ, միայն թէ հարկաւոր է, որ անոնք տիրապետեն շատ լեզուներու...»: Ապա ավելացնում է. «Բարձունքները տքնաջան, համառ աշխատանքով կը նուաճեն և նաև՝ մեծ սիրով ու նուիրումով»:

Ս. Տեր-Ներսեսյանի այս վերջին մտորումները կարծես ինձ պարտավորեցրին՝ զբաղվել հայ մանրանկարիչների մատենագիտությամբ՝ նպատակ ունենալով օգտակար ծառայություն մատուցել մանրանկարչությունը ուսումնասիրող երիտասարդ մասնագետներին:

Ինչպես որ առանց ձեռագրաց ցուցակների հնարավոր չէ պատկերացնում կազմել մեր ձեռագրական հարստությունների մասին, այդպես էլ մանրանկարչության մատենագիտության բացակայության պայմաններում մասնագետների ուշադրությունից կարող են վրիպել բարձրարվեստ նկարազարդումներ ստեղծած որոշ գրչության օջախներ, ինչպես և բազմաթիվ ծաղկողների ինքնությունը որոշող տվյալներ:

Հրապարակի վրա եղած հայ արվեստագետներին նվիրված բառարանների հիման վրա, որոնց նախաձեռնողները եղել են արժանահիշատակ գիտնականներ Գարեգին Լևոնյանը, Օնոնիկ Ավետիսյանը, Դանիել Դգնունին, Տիգրան Կույումճյանը, Նորայր Պողարյանը, Մոսկվայում հրատարակված «Բիոբիբլիոգրաֆիչեսկի սլովար»-ի չորս հատորներում /1970-1983 թթ./ ընդգրկված են նաև հայ մանրանկարիչների անունները (Ա-Մ): Բացի այդ, Լևոն Զուգասզյանի միջոցով տեղեկացանք Գերմանիայում հրատարակվող համաշխարհային նկարիչների բառարանի մասին, որին մասամբ մասնակցեցին նաև մեր մասնագետները:

Սակայն այս ամենը հեռու էր մեզ հետաքրքրող ընդգրկուն մատենագիտությունը համարվելուց:

Մեր աշխատության մեջ ընդգրկված են Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող 9-19-րդ դարերի 9.000 պատկերազարդ մատյանների շուրջ 470 նկարիչների անուններ, որոնք գործել են հայ գրչության տարբեր օջախներում:

Աշխատանքի ընթացքում հատուկ ուսումնասիրության նյութ են դարձել նորահայտ նկարիչների գործերը, նշտվել որոշ ձեռագրերի ժամանակն ու վայրը, համալրվել հայտնի նկարիչների գործերը նորահայտ մատյաններով:

Բերենք մի քանի օրինակներ.

Կալիֆորնիայի համալսարանի ուսուցչապետ Տիգրան Կույումճյանի հրատարակած մինչև 1.000 թվահամարը ընդգրկող մանրանկարված ձեռագրերի մատենագիտության մեջ նշված էր Նյու Յորքի Մորգանի գրադարանի թիվ 789 ձեռագիրը, որը բաղկացած էր ընդամենը երեք պատկերազարդ թերթերից: Այդ նկարները մեզ թույլ տվեցին ենթադրելու, որ դրանք պետք է անջատված լինեին նկարիչ Պողոսի ընդօրինակած 1297 թ. Ավետարանից: Հարգարժան Ավետիք Սանջյանից և Թովմաս Մեթյուսից մեր խնդրած ձեռագրի գունատիպ լուսանկարները համոզեցին, որ դրանք իսկապես Մատենադարանի հիշված ձեռագրի բացակա էջերն են:

Սիրարփի Տեր-Ներսիսյանը (կենտրոնում) շրջապատված Մատենադարանի աշխատակիցներով

Հատկապես դրսի ձեռագրերի հետ կապված նշգրտումները մեծ մասամբ պայմանավորված են եղել շնորհիվ Ս. Տեր-Ներսեսյանի հետ ունեցած մեր նամակագրության: Այսպես. Ղրիմի գաղթօջախի 17-րդ դարի մանրանկարիչ Նիկողայոս Մելանավորի ընդօրինակությամբ Մատենադարանում ունենք 30

ձեռագիր: Դրանցից մեկը նկարիչն ընդօրինակել է կիլիկյան «Ուռ նկարիչների» Ավետարանից: Բայց պարզվեց, որ Նիկողայոսն այն ընդօրինակել է երեք անգամ: Երկրորդ օրինակը պահվում է Ադրբեջանի ԳԱ գրադարանում, իսկ երրորդ օրինակի մասին մեզ տեղեկացրեց Ս. Տեր-Ներսեսյանը: Նա գրում է. «Նիկողոսի մասին ձեր ղրկած տեղեկությունները և լուսանկարները շատ օգտակար են: Ինչ տարօրինակ բան է, որ այդ Նիկողայոս գրիչը այդպես մանրանկարներ ունեցող ձեռագիրը ընդօրինակել է երեք անգամ: Հիմա վստահ եմ, որ Գյուլբենկյան հավաքածուի մեջ տեսածս ձեռագիրը, որ նույնպես ընդօրինակված է «Ուռ նկարիչների» Ավետարանից, նույն Նիկողայոսի գործն է»:

Մատենադարանի փոխտնօրեն Բարկեն Զուգասզյանի ջանքերով ԱՄՆ-ից բերված մի Ավետարանը ժամանակին ուսումնասիրել էր Ս. Տեր-Ներսեսյանը, սակայն չէր ավարտել և ցանկանում էր ունենալ նոր տվյալներ. «Ձեռագրի լրացուցիչ բացատրության համար ձեր աջակցության պետք ունիմ»: Մենք հաճույքով կատարեցինք: Այդ առիթով էր, որ նա գրում է.

«Մանրանկարիչներու մասին բավականին տվյալներ հավաքած եմ, որոնք բաղված են ձեռագիրներե, և տակավին չեն երատարակված, նույնիսկ չեն ցուցակագրված...: Եթե մանրանկարիչներե ոմանց մասին լրացուցիչ տեղեկություններու պետք ունեք, խնդրեմ, գրեցեք ինձ: Եվ եթե այդպիսի տեղեկություններ ունեմ, սիրով ձեզ կուղարկեմ: Կարծեմ ձեզ վստահացնելու պետք չունեմ ու միշտ պատրաստ եմ ձեզ օգնելու...»:

Ս. Տեր-Ներսեսյանը ոչ միայն աջակցում էր մատենագիտությանը, այլև երբեմն իր մտորումները այս կամ այն ծաղկողի մասին կիսում էր ինձ հետ և հենց դրանով էլ դարձյալ օգնում էր: Այսպես. նամակներից մեկում իր կարծիքն է հայտնում այն մասին, թե Մատենադարանի կիլիկյան ձեռագրերից երկուսի ավետարանիչների պատկերները պետք է որ միևնույն ծաղկողին պատկանեն. «Եթե առիթը ունենաք, պետք է խնդրեմ, որ այդ կետը նշտեք»: Անշուշտ այդ նշտումը անհրաժեշտ էր նաև մատենագիտությանը:

Մատենագիտության համար արժեքավոր նշգրտումներից մեկն էլ Թորոս Ռոսլինի մեզ հայտնի նկարազարդած առաջին Ավետարանի հայտնաբերումն էր: Հայտնի էր, որ ձեռագիրը պատվիրել էր կիլիկյան Կոստանդին Կաթողիկոսը՝ իր սան Լևոն Գ թագաժառանգի համար: Գաղթի ու թալանի հետևանքով տեղից-տեղ թափառած շատ ձեռագրերի հետ միասին, երկար ու արկածալի ճանապարհ անցած այս Ավետարանը, քայքայված ու թերթահան, վիրավոր վիճակում ապաստան էր գտել Մաշտոցի անվան Մատենադարանում՝ անհայտ պահելով իրեն ու իր հոչակավոր հեղինակին:

Երկար որոնումները պարզեցին, որ ձեռագրի ինը խորանները փակցվել էին 1700 թ. Ղրիմում ընդօրինակված մի Ավետարանում /Ձեռ. 8.000/: Իսկ 10-րդ խորանը գտնվեց Մատենադարանի ցուցասրահում, որտեղ այն ներկայացված էր որպես 14-րդ դարի կիլիկյան ձեռագրերից մի պատառիկ: Լևոն Գ-ի պատանեկան նկարը փակցված էր Մատենադարանի 7690 ձեռագրում: Հայտնաբերվեց ձեռագիրը, և բացակա թերթերը տեղադրվեցին այնտեղ: Դա Մատենադարանի թ. 8321 Ավետարանն է:

Սիրարփի Տեր-Ներսեսյանը, քաջատեղյակ լինելով Ռոսլինի արվեստին, այդ Ավետարանի հայտնաբերման մասին գրում է. «Շնորհավորում եմ, որ կրցար շատ

համոզիչ կերպով լուծել Լևոն Գ թագավորի նկարի խնդիրը և գտնել այն ձեռագիրը, որուն նախապես կպատկաներ»: Ինձ համար, բնական է, շատ կարևոր էր նրա կարծիքը:

Մատենագիտության առիթով բացահայտվեցին նաև 14-րդ դարի մանրանկարիչ Պողոս Ակնեցու մատյանները, որոնց թիվը հասնում է 14-ի, այն դեպքում, երբ Գարեգին Հովսեփյանին և Արամ Ավետիսյանին հայտնի էին ընդամենը երկու ձեռագիր՝ ընդօրինակված Գլաձորում:

Բացահայտվեցին արժեքավոր նկարազարդ մատյաններ, որոնք ընդօրինակվել էին Այուդյաց աշխարհի նշանավոր Գլաձորի համալսարանի ուսումնամանկավարժական գործի անմիջական շարունակողը հանդիսացող Հերմոնի վանքի բարձր տիպի վարդապետարանում: Որոնումներից մեզ հայտնի դարձավ անուշադրության մատնված 15-րդ դարի գրիչ Հովհաննեսի ընդօրինակած Ավետարանը՝ իր հարուստ տերունական պատկերաշարով, որի գրչության վայրը Հերմոնի վանքն է:

Հայ մանրանկարչական արվեստի պատմությունը զգալիորեն հարստանում է գաղթօջախների նկարիչների նորահայտ գործերով: Հայտնաբերվեց Կ. Պոլսի 17-րդ դարի լավագույն նկարիչներից մեկի՝ Մարկոս Պատկերահանի շքեղորեն նկարազարդած 1651 թ. Հայսմավուրքը, որը հետագայում, էջմիածնի գրչատանը, գաղափար օրինակ դարձավ Նաղաշ Հովնաթանի որդիների՝ Հակոբի և Հարությունի համար, որոնց ընդօրինակած Հայսմավուրքը դարձյալ անհայտ էր մնացել: Ճանաչվեցին նաև Նաղաշ Հովնաթանի տոհմի նկարիչները՝ Նաղաշի հայրը՝ Հոհանը, Նաղաշի եղբայրը՝ Մարգարեն, նրա որդին և ուրիշներ:

Մատենագիտության մեջ հաշվի են առնված մասնագետների ուսումնասիրությունները, նրանց կողմից կատարված նշումներն ու լրացումները:

Հնարավորության սահմաններում օգտվել ենք արտասահմանյան ձեռագրերի ցուցակներից և ընդգրկել մի շարք ծաղկողների վերաբերյալ լրացուցիչ անհրաժեշտ տեղեկություններ:

Մատենագիտությունն ունի նաև ընդարձակ ցանկեր: Հին և Նոր Կտակարանների թեմատիկ նկարների հարուստ ցանկը տրվում է առաջին անգամ[1]:

Մանրանկարիչներին վերաբերող այս աշխատությունը չէր կարող լիարժեք համարվել մանրանկարչության ուսումնասիրման համար, քանի որ չափազանց շատ են այն նկարազարդ մատյանները, որոնց նկարիչներն անհայտ են: Ուստի ձեռնամուխ եղանք կազմելու 7-19-րդ դարերի «Անանուն մանրանկարիչների մատենագիտությունը»: Ավարտին է մոտենում 17-րդ դարի նկարազարդ ձեռագրերի ուսումնասիրումը:

Սիրարփի Տեր-Ներսեսյանը երկրորդ անգամ Երևան այցելեց 1969 թվականի աշնանը: Նրա հետ ունեցած Մատենադարանի աշխատակիցների հանդիպումները չափազանց ջերմ էին ու անմոռանալի: Զրավարարվելով Մատենադարանի հանդիպումներով, մենք նրան անհանգստացնում էինք երեկոները՝ հաճախելով հյուրանոց, որտեղ նա միշտ սիրով էր պատասխանում մեզ հետաքրքրող բազում հարցերին:

---

[1] Աշխատությունը տպագրական ընթացքի մեջ է սկսած 1985 թվականից առ այսօր:

Ինչպե՞ս կարելի է մոռանալ այնքան սիրված ու հարգված մարդու, մեծագույն արվեստագետի այդ զրույցների ընթացքում ասած իմաստուն խոսքերը, որ արձանագրել էր շնորհալի լրագրողն ու պահ տվել մեզ.

«Ամբողջ պատմություն մը, ժողովրդի մը հարուստ մշակույթը, այս նույն ժողովրդի էությունը, նկարագիրը կա այս ձեռագրերուն մեջ: Բացահայտել այդ էությունը և աշխարհին ըմբռնելի դարձնել այդ՝ կնշանակէ աշխարհը հարստացնել ինքնուրույն բույրով ու երանգով մը ևս, կնշանակէ փառավորել հայ ժողովրդի անունը...»:

1983 թվականին երբ ստացել էր «Դիմանկար» ալբոմը, ջերմորեն շնորհավորելուց հետո, նամակն ավարտում է այսպես.

«Երանի թե կարենայի անգամ մը ևս գալ և քեզ ու ուրիշներուն հետ նույն սենյակը աշխատել, բայց այդ մասին երազել իսկ ավելորդ է»:

Նա ընդհանրապես ուշադիր էր Մատենադարանի յուրաքանչյուր երիտասարդ գիտնականի նկատմամբ, և դա արտահայտում էր նաև նրանց աշխատություններին նվիրած իր գրախոսություններով:

Սիրարփի Տեր-Ներսեսյանի 1969 թվականի այցելությունից հիշատակ մնաց հրաժեշտի լուսանկարը:

Հավերժ փա՜ռք նրա հիշատակին: